ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2023/13 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
12	Ձմեռային բաճկոն – 395 հատ Մաքսային ծառայության փոխգնդապետի, մայորի, կապիտանի, ավագ լեյտենանտի, լեյտենանտի և կրտսեր լեյտենանտի կոչումներ ունեցող մաքսային մարմնի հանրային ծառայողների ձմեռային բաճկոնը (Նկար 28) մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) անջրանցիկ կտորից է, մեմբրանապատ: Ձևվածքը կիպ նստած ուրվագծով է, հորիզոնական կարերով և բարձր օձիքով: Առաջամասում գոտկատեղից ցածր՝ 14 սմ բացվածքով 2 ներկարված ուղիղ գրպան՝ եզրակարված 2 մմ լայնությամբ կարմիր (գունային կոդը՝ #19-1557TPG) եզրաքուղով: Դաստակի հատվածում կողակարից դուրս եկող 5 սմ լայնությամբ, սուրանկյուն եզրով ավարտվող, 14 մմ տրամաչափով մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) մետաղական կոճգամներով կոճկվող ներկարված գոտի: Ձախ թևի վրա, ուսակարերից 9 սմ ներքև՝ թևքանշան (Նկար 84): Օձիքի հատվածում մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) գաղտնակարված շղթայով և առաջամասում՝ 14 մմ տրամաչափով մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) 4 մետաղական կոճգամներով ամրացող գլխանոց: Լանջափեշը և օձիքը եզրակարված 2 մմ լայնությամբ կարմիր (գունային կոդը՝ #19-1557TPG) եզրաքուղով: Բաճկոնը կոճկվում է մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) երկգլխանի գաղտնակարված շղթայով: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ, որի տակ՝ պիտակ (Նկար 87): Բաճկոնի երկարությունը՝ 105-115 սմ (ըստ չափ/հասակի): Բաճկոնի կտորը՝ 100 տոկոս Պ/Է՝ 67 գր/քմ±5% խտությամբ, մգդակված 80 % բադի բմբուլի և 20 % բադի փետուրի խառնուրդով՝ 350 գր/քմ±5% խտությամբ: Աստառը՝ կարմիր (գունային կոդը՝ #19-1557TPG)՝ պոլիէսթերի ատլասից: Անջրանցիկ վերարկու – 395 հատ Մաքսային ծառայության փոխգնդապետի, մայորի, կապիտանի, ավագ

	լեյտենանտի, լեյտենանտի և կրտսեր լեյտենանտի կոչումներ ունեցող մաքսային մարմնի հանրային ծառայողների աշնանային անջրանցիկ վերարկուն (Նկար 30) բաց մոխրագույն (գունային կոդը՝ #15-4101) անջրանցիկ կտորից է, մեմբրանապատ: Ձևվածքն ունի վերին հատվածում կիպ նստած, դեպի փեշը լայնացող ուրվագիծ, առաջամասում՝ լանջափեշերին, իրար զուգահեռ տեղադրված են 22 մմ տրամագծով 11 ոսկեգույն մետաղյա գլխիկավոր կոճակներ (Նկար 83), գոտկատեղի 2 կողմերում՝ 1 սմ լայնությամբ գոտեմակօղեր: Գոտին՝ միևնույն կտորից, 4 սմ լայնությամբ, պլաստմասսայե ամրակով: Օձիքը սուրանկյուն կտրվածքով՝ հետ ծալվող, հետնամասը՝ ծավալուն ծալվածքով: Դաստակի հատվածում կողակարից դուրս եկող 5 սմ լայնությամբ, սուրանկյուն եզրով ավարտվող, 14 մմ տրամագծով ոսկեգույն մետաղյա գլխիկավոր կոճակով (Նկար 83) կոճկվող ներկարված գոտի: Առաջամասում՝ 45 աստիճան թեքությամբ, 15 սմ բացվածքով 2 ներկարված գրպան՝ եզրակարված 2 մմ լայնությամբ կարմիր (գունային կոդը՝ #19-1557TPG) եզրաքուղով: Ձախ թևի վրա, ուսակարից 9 սմ ներքև՝ թևքանշան (Նկար 84): Վերարկուն ամբողջությամբ, այդ թվում՝ նաև առջևի սեղմոնները՝ եզրակարված 2 մմ լայնությամբ կարմիր (գունային կոդը՝ #19-1557TPG) եզրաքուղով: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ, որի տակ՝ պիտակ (Նկար 87): Վերարկուի երկարությունը՝ 96-106 սմ (ըստ չափ/հասակի): Վերարկուի կտորը՝ 100 տոկոս Պ/Է՝ 210 գր/քմ ±5% խտությամբ, աստառը կարմիր (գունային կոդը՝ #19-1557TPG)՝ պոլիէսթերի ատլասից: Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայության համապատասխան հատուկ կոչումն արտացոլող լամբակներն իրար զուգահեռ կարվում են օձիքի կտրվածքի վերին հատվածին: Սվիտեր – 790 հատ Մաքսային ծառայության փոխգնդապետի, մայորի, կապիտանի, ավագ լեյտենանտի, լեյտենանտի և կրտսեր լեյտենանտի կոչումներ ունեցող մաքսային մարմնի հանրային ծառայողների սվիտերը (Նկար 34) մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) գործվածքից է: Առաջամասի աջ կողմում, ուսագլխից մինչև գոտկատեղ՝ ցորենահյուսք նախշ: Կրծքամասի ձախ հատվածում՝ կրծքի տարբերանշան (Նկար 85): Օձիքը՝ սուր բացվածքով, եզրագծված՝ կարմիր (գունային կոդը՝ #19-1557TPG) 2 մմ լայնությամբ եզրագծով, որից 1 սմ հեռավորության վրա զուգահեռ տեղակայված են իրարից 2 սմ հեռավորության վրա գտնվող 2 մմ լայնությամբ 2 ոսկեգույն գծեր: Երկու թևերի վրա՝ 15 սմ լայնությամբ և 30 սմ երկարությամբ օվալաձև արմնկակալներ: Թևեզրերը եզրագծված կարմիր (գունային կոդը՝ #19-1557TPG) 2 մմ լայնությամբ եզրագծով: Դաստակի հատվածում կողակարից դուրս եկող 5 սմ լայնությամբ, սուրանկյուն եզրով ավարտվող, 14 մմ տրամագծով ոսկեգույն մետաղյա գլխիկավոր կոճակով (Նկար 83) կոճկվող ներկարված գոտի: Օձիքը, թեզանիքները և գոտկատեղը՝ հավաքովի գործվածքով: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ, որի տակ՝ պիտակ (Նկար 87): Սվիտերի երկարությունը՝ 56-66 սմ (ըստ չափ/հասակի): Գործվածքը՝ 80 տոկոս բրդի և 20 տոկոս Պ/Է խառնուրդ՝ 550 գր/քմ ±5% խտությամբ: Արմնկակալների կտորը՝ մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG), ռիպստոպ տեսակի, 44 տոկոս բրդի, 54 տոկոս Պ/Է և 2 տոկոս լայկրայի խառնուրդ՝ 235 գր/քմ ±5%

	խտությամբ: Ձմեռային տաբատ – 790 հատ Մաքսային ծառայության փոխգնդապետի, մայորի, կապիտանի, ավագ լեյտենանտի, լեյտենանտի և կրտսեր լեյտենանտի կոչումներ ունեցող մաքսային մարմնի հանրային ծառայողների ձմեռային տաբատը (Նկար 42) մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) կտորից է՝ ուղիղ, նստեցված ուրվագծով, ձախ կողմից՝ մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) գաղտնի շղթայով և մետաղական կեռիկով կոճկվող: Կողագծերը՝ եզրակարված 2 մմ լայնությամբ կարմիր (գունային կոդը՝ #19-1557TPG) եզրաքուղով: Գոտու լայնությունը՝ 4 սմ, առաջամասում՝ 2 մմ լայնությամբ կարմիր (գունային կոդը՝ #19-1557TPG) եզրաքուղով եզրակարված, սուրանկյուն եզրերով ավարտվող, 22 մմ տրամագծով 2 ոսկեգույն մետաղյա գլխիկավոր կոճակներով (Նկար 83) կոճկվող, 20 սմ երկարությամբ և 4 սմ լայնությամբ ներկարված դեկորատիվ գոտի: Գոտու ներսի հատվածում՝ պիտակ (Նկար 87): Տաբատի կտորը՝ ռիպստոպ տեսակի, 44 տոկոս բրդի, 54 տոկոս Պ/Է և 2 տոկոս լայկրայի խառնուրդ՝ 235 գր/քմ ±5% խտությամբ, աստառը մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG)՝ պոլիէսթերի ատլասից: Դաշտային բաճկոն – 395 հատ Մաքսային ծառայության փոխգնդապետի, մայորի, կապիտանի, ավագ լեյտենանտի, լեյտենանտի և կրտսեր լեյտենանտի կոչումներ ունեցող մաքսային մարմնի իգական սեռի հանրային ծառայողների դաշտային բաճկոնը (Նկար 44) մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) կտորից է՝ ուղիղ ուրվագծով: Օձիքը կանգուն՝ 5 սմ լայնությամբ: Առաջամասում՝ մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) գաղտնի շղթայով կոճկվող: Կրծքամասի երկու կողմերում 14 սմ լայնությամբ և 14 սմ երկարությամբ, կպչուն ժապավենով ամրացող, 6սմ լայնությամբ կափույրով ծավալուն վրադիր գրպաններ: Ձախ կողմի գրպանի վրա՝ կրծքի տարբերանշան (Նկար 85): Գոտկատեղի երկու կողմերում՝ 17 սմ լայնությամբ և 18 սմ երկարությամբ, կպչուն ժապավենով ամրացող, 6 սմ լայնությամբ կափույրով ծավալուն վրադիր գրպաններ: Ձախ թևի վրա, ուսակարից 9 սմ ներքև՝ թևքանշան (Նկար 84): Շղթայի եզրակարը և գրպանների կափույրները՝ եզրագծված կարմիր (գունային կոդը՝ #19-1557TPG) 2 մմ լայնությամբ եզրաքուղով: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ, որի տակ՝ պիտակ (Նկար 87): Բաճկոնի երկարությունը՝ 63-73 սմ (ըստ չափ/հասակի): Բաճկոնի կտորը՝ ռիպստոպ տեսակի, 44 տոկոս բրդի, 54 տոկոս Պ/Է և 2 տոկոս լայկրայի խառնուրդ՝ 235 գր/քմ ±5% խտությամբ, աստառը՝ մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG)՝ պոլիէսթերի ատլասից, մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) պլաստմասսայե կոճակով կոճկվող ծոցագրպաններով: Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայության համապատասխան հատուկ կոչումն արտացոլող լամբակներն իրար զուգահեռ կարվում են օձիքի առաջամասին: Դաշտային սվիտեր – 790 հատ Մաքսային ծառայության փոխգնդապետի, մայորի, կապիտանի, ավագ լեյտենանտի, լեյտենանտի և կրտսեր լեյտենանտի կոչումներ ունեցող մաքսային մարմնի իգական սեռի հանրային ծառայողների դաշտային սվիտերը (Նկար 47) բաց մոխրագույն (գունային կոդը #15-4101), իսկ աջ թևը՝ մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) տրիկոտաժե գործվածքից է,

	որն ամբողջական է դարձնում առաջամասի ամբողջ երկայնքով համապատասխանաբար մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) և կարմիր (գունային կոդը՝ #19-1557TPG) գույներով գործված ՀՀ ՊԵԿ տարբերանշանը: Օձիքը՝ շրջանաձև բացվածքով: Գոտկատեղը, օձիքը և թևքերը՝ բաց մոխրագույն (գունային կոդը #15-4101) հավաքովի գործվածքով: Օձիքի միացման կարի տակ՝ պիտակ (Նկար 87): Սվիտերի երկարությունը՝ 56-66 սմ (ըստ չափ/հասակի): Գործվածքը՝ 50 տոկոս բամբակի և 50 տոկոս Պ/Է խառնուրդ, 300 գր/քմ ±5% խտությամբ: Հինգմատնյա ձեռնոց - 395 զույգ Մաքսային ծառայության փոխգնդապետի, մայորի, կապիտանի, ավագ լեյտենանտի, լեյտենանտի և կրտսեր լեյտենանտի կոչումներ ունեցող մաքսային մարմնի իգական սեռի հանրային ծառայողների հինգմատնյա ձեռնոցը (Նկար 57) մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) անջրանցիկ տեխնիկական կտորից է, կարմիր (գունային կոդը՝ #19-1557TPG) եզրագծերով մշակված թևքածալերով՝ վրան 3 սմ տրամագծով ասեղնագործված ՀՀ ՊԵԿ տարբերանշան: Ձեռնոցի ներսի հատվածը մշակված է 100 տոկոս ֆլիսով: Ձեռնոցի կտորը՝ 100 տոկոս Պ/Է: «Բերետ» ձմեռային գլխարկ – 395 հատ Մաքսային ծառայության փոխգնդապետի, մայորի, կապիտանի, ավագ լեյտենանտի, լեյտենանտի և կրտսեր լեյտենանտի կոչումներ ունեցող մաքսային մարմնի իգական սեռի հանրային ծառայողների բերետ ձմեռային գլխարկը (Նկար 59) մուգ կապույտ (գունային կոդը՝ #193921TPG) մահուդե կտորից է, առաջամասի ձախ կողմում 5 սմ տրամագծով ասեղնագործված ՀՀ ՊԵԿ տարբերանշան: Բերետի առջև մասի բարձրությունը՝ 9-10 սմ, հետևինը՝ 7-8 սմ: Ճակատակապը պատված է 1 սմ լայնությամբ սև գույնի (գունային կոդը՝ 19-4203TPG) արհեստական փափուկ կաշվով՝ անցկացված սև գույնի (գունային կոդը՝ 194203TPG) քուղով: Պատվածքի հետնամասից դուրս գտնվող քուղի երկարությունը՝ 9-10 սմ: Բերետի ներսամասը մշակված է աստառով: Բերետի կտորը՝ 80 տոկոս բրդի և 20 տոկոս Պ/Է խառնուրդ՝ 550 գր/քմ ±5% խտությամբ, աստառը՝ մուգ կապույտ (գունային կոդը՝ #193921TPG)՝ պոլիէսթերի ատլասից: Մաքսային ծառայության փոխգնդապետի ու մայորի լամբակ (կարվող) - 140 զույգ Մաքսային ծառայության փոխգնդապետի ու մայորի լամբակներն ուղղանկյուն են: Չափերը՝ 4 սմ լայնությամբ և 7 սմ երկարությամբ, մակերեսը՝ մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) գործվածքով և երկու ոսկեգույն մակաշերտով: Մաքսային ծառայության կապիտանի, ավագ լեյտենանտի, լեյտենանտի և կրտսեր լեյտենանտի լամբակ (կարվող) – 650 զույգ Մաքսային ծառայության կապիտանի, ավագ լեյտենանտի, լեյտենանտի և կրտսեր լեյտենանտի լամբակներն ուղղանկյուն են: Չափերը՝ 4 սմ լայնությամբ և 7 սմ երկարությամբ, մակերեսը՝ մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) գործվածքով և մեկ ոսկեգույն մակաշերտով: Լամբակների վրա տեղադրվող 18 մմ տրամագծով աստղեր – 320 հատ Լամբակների վրա տեղադրվող ոսկեգույն, 18 մմ տրամագծով մետաղական հնգաթև աստղեր (Նկար 82): Լամբակների վրա տեղադրվող 14 մմ տրամագծով աստղեր – 3540 հատ Լամբակների վրա տեղադրվող ոսկեգույն, 14 մմ տրամագծով մետաղական հնգաթև աստղեր (Նկար 82): ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ * Ընթացակարգն իրականացվում է

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՊԵԿ-ԷՀԱՊՁԲ-2023/13 ниже представляет полное описание предлагаемого им товара.	
Номер лота	Предлагаемый товар
	Технические характеристики
12	
	համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի: ** Գնման առարկայի բնութագիրը բավարարում է մեկից ավելի հնարավոր մասնակիցների և արտադրողների: *** Մատակարարված ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Մատակարարը իր միջոցներով և իր հաշվին: **** 1-ից 12-րդ չափաբաժիններով հաստատված յուրաքանչյուր լրակազմի մեջ ներառված յուրաքանչյուր տեսակի ապրանքի համար մատակարարը պետք է ներկայացնի մեկ միավորի գինը (աղյուսակը կցի Հավելված 1-ին՝ Դիմում Հայտարարությանը), որը համամասնորեն կնվազեցվի պատվիրատուի կողմից՝ աճուրդի ընթացքում հաստատված վերջնական գնին համապատասխան: Միավոր գների աղյուսակը՝ Հավելված 1,1-ը կցվում է: ***** 1-ից 12-րդ չափաբաժիններով հաստատված յուրաքանչյուր լրակազմի մեջ ներառված համազգեստի վրա պետք է լինի համապատասխան պիտակ, որի վրա պետք է նշված լինի կլտորի կամ գործվածքի բաղադրությունը (տոկոսային հարաբերակցությամբ) և ապրանքի խնամքի առանձնահատկությունները (պատկերների կամ մակագրությունների տեսքով): ****** 1-ից 12-րդ չափաբաժիններով հաստատված յուրաքանչյուր լրակազմ պետք է ունենա առանձին փաթեթավորում, որի վրա պետք է նշված լինի լրակազմի անվանումը, արտադրողի անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը, լրակազմի մեջ մտնող յուրաքանչյուր բաղադրիչի անվանումը, չափսը և քանակը: Լրակազմի փաթեթավորման մեջ ներառվող լամբակների վրա աստղերը պետք է համապատասխանաբար ամրացված լինեն: 5-ից 8-րդ չափաբաժիններով հաստատված յուրաքանչյուր լրակազմի փաթեթավորման մեջ չեն ներառվում համազգեստի բաղկացուցիչ պարագաներից կոշիկները, կիսաճտքավոր կոշիկները և բարձրակրունկ կոշիկները, որոնցից յուրաքանչյուր զույգը պետք է լինի առանձին ստվարաթղթե տուփով, որի վրա պետք է նշված լինի անվանումը, արտադրողի անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը, չափսը: ******* 1-ից 12-րդ չափաբաժիններով հաստատված յուրաքանչյուր լրակազմում ներառված համազգեստի այն տեսակը, որի վրա առկա է կոճակ պետք է ունենա միևնույն կոճակից մեկական պահեստային օրինակ, որն պետք է ներսի կողմից պիտակով ամրացած լինի տվյալ համազգեստին: ********** Մատակարարը ապրանքի մատակարարումից առաջ պետք է համաձայնեցմանը ներկայացնի յուրաքանչյուր ապրանքատեսակից մեկ օրինակ նմուշ՝ արտաքին տեսքը համաձայնեցնելու նպատակով: Հաստատված նմուշը հանդիսանում է պայմանագրով սահմանված քանակի մաս և ենթակա է մուտքագրման՝ վերջին խմբաքանակը ներկայացնելիս: Նմուշի հետ համատեղ՝ մատակարարը պարտավոր է ներկայացնել արտադրման համար օգտագործված բոլոր նյութերն՝ ամրացված գծագրական թղթի վրա: Ներկայացված նմուշները ստորագրում է մատակարարը, որոնք հաստատվում կամ մերժվում են մասնագիտական խմբի կողմից, ներկայացնելուց ոչ ուշ քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում: ********** Համազգեստի և համազգեստի բաղկացուցիչ պարագաների չափսերը լրացուցիչ կտրամադրվեն պատվիրատուի կողմից՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելուց

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

	հետո 15 օրացուցային օրվա ընթացքում, մատակարարի էլ.-փոստին ծանուցում ուղարկելու միջոցով: ********** Մանրամասների համար օգտվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 8-ի «Մաքսային մարմնի հանրային ծառայողի համազգեստի ձևը սահմանելու մասին» N 1910-Ա որոշման դրույթներից: